«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում:

Հաստատություն՝ *«Երևանի համար 131 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ*

Դաստիարակ՝ *Մելիտա Բաղրամյան*

Ղեկավար՝ *Ավետիսյան Ժաննա*

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1 ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ և ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ.....4

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում

1.2 Մանկապարտեզի և մանկավարժի դերը երեխայի զարգացման գործում

1.3. Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԻՔ-ՄԱՆԿԱՎԱՐԺ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....11

2.1. Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը սաների դաստիարակման և կրթական աշխատանքի կազմակերպման հարցում

2.2 Ծնողական ժողովներ, առաջարկություններ

2.3.Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

2.4Ընտանիք – մանկապարտեզ համագործակցության մոդել

2.5 Փորձարարական հետազոտություն.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

Ներածություն

Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջին օղակն է, որտեղ նա ճանաչում է ինքն իրեն և ձևավորվում որպես անհատ: Երեխայի սոցիալականացման երկրորդ օղակը նախադպրոցական ուսումնական հաստատությունն է, որտեղ երեխան շփում է հաստատում դաստիարակների և հասակակիցների հետ: Երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման համար կարևորում է համարում մանկավարժական աշխատողի համագործակցությունը սանի ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ, որը նպաստում է ծնողի անմիջական մասնակցությամբ մանկապարտեզում կրթական աշխատանքների, ինչպես նաև ընտանիքում սանի ճիշտ դաստիարակության կազմակերպմանը:

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մասն են կազմում, քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում երեխայի ճիշտ զարգացմանը նպաստելը: Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզը շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե՞ ծնողը և թե՞ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների, հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: Սակայն համգործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնել հաջողության:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակը ընտանիք – մանկապարտեզ համագործակցության մոդելների ուսումնասիրությունն ու ներկայացումն է:

Թեմայի արդիականությունը: Այսօր թե՞մանկապարտեզը և թե՞ ծնողական համայնքը ավելի մեծ հնարավորություններ ունեն հաղորդակցման և գործընկերության հարթակներ ստեղծելու և իրար աջակցելու համար: Եվ այդ համագործակցության

արդյունավետությունով է պայմանավորված նոր սերնդի առողջ և ներդաշնակ զարգացումը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները:Աշխատանքի նպատակն է ներկայացնել ընտանիքի և մանկապարտեզի դերը և նշանակությունը երեխայի ներդաշնակ զարգացման գործում, ինչպես նաև ուսումնասիրել և ներկայացնել ընտանիք – մանկապարտեզ համագործակցության մոդելները:

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում

Դաստիարակությունը, ինչպես հայտնի է, նպատակաուղղված ներգործություն է երեխաների զարգացման, նրանց գիտակցության ու վարքի, աշխարհայացքի, արարքների և սովորույթների վրա: Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է՝ սկսած ծնված օրից: Ուստի ընտանիքը եղել և մնում է անձի դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը:

Հետևապես դաստիարակության մեջ կարևորը դրա ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Հայաստանում դեռևս 4-րդ դարից կիրառվել են ընտանիքին, ամուսնությանը, ընտանեկան դաստիարակությանը վերաբերող ներքին և արտաքին կանոններ:

Ծնվելու պահից երեխան հայտնվում է իր համար բոլորովին նոր մի միջավայրում, որտեղ նրա հիմնական ու առաջին սյունը ընտանիքն է: Երեխան աչքերը բացելով տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունը, երեխայի հետ շփումը ազդում են նրա հետագա զարգացման վրա, նույնիսկ շատ վաղ տարիքում, երբ կարող են չգիտակցվել երեխայի կողմից: Դաստիարակչական ներգործությունների արդյունավետությունը կախված է նաև ծնողների միջև առկա փոխհարաբերություններից, ընտանիքի կյանքի ձևից: Դաստիարակությունն ընտանիքում դրսևորվում է ամենատարբեր իրավիճակներում: Նման շարունակական ու տևական ներգործությունն արդյունավետ է երեխայի նյարդային համակարգի ներդաշնակ ձևավորման համար:

Ընտանիքն ավելի լայն հնարավորություն ունի երեխային ընդգրկելու գործունեության բազմազան ու տարաբնույթ ձևերով (կենցաղային, աշխատանքային, տնտեսական, հաղորդակցական- դաստիարակչական), քան մանկապարտեզը: Եթե մանակապարտեզում երեխային դեպքից դեպք է որևէ աշխատանք հանձնարարվում, ապա ընտանիքում բոլորովին այլ պատկեր է:

1,5-2 տարեկան երեխան կարող է մշտական պարտավորություններ ունենալ, ասենք՝ երեկոյան հավաքել խաղալիքները, հայրիկին հողաթափեր, պապիկին թերթ մատուցել և այլն: 3-4 տարեկան երեխային կարելի է վստահել ջրել սենյակային բույսերը, օգնել մեծերին և այլն:

Յուրաքանչյուր ընտանիք ունի ճիշտ կամ սխալի, բարու և չարի, գթասրտության, <<կարելիի>> ու <<չի կարելիի>> իր պատկերացումները: Եթե երեխայի շրջապատում թույլատրելի է համարվում ստի, կեղծիքի ու դաժանության առկայությունը, ապա դժվար թե այդ երեխաները զերծ մնան դրանց ավերիչ ազդեցությունից: Ընդօրինակելով մտերիմներին, սիրելի մարդկանց, հետևելով նրանց կենսական դասերին՝ երեխան աստիճանաբար յուրացնում է վարվելակերպի, փոխհաղորդակցման մշակույթը: Մեծ մանկավարժներն ընդգծում են, որ ընտանեկան դաստիարակությունն ամենից առաջ ծնողների ինքնադաստիարակությունն է:

Ընտանեկան դաստիարակությունը կարող է նպաստել երեխայի մոտ ձեռներեցության, տնեսվարության, հաշվենկատության, ինչպես նաև ինքնուրույնության,անկախության, ինքնասպասարկման կարողությունների ձեռքբերմանը և երեխայի արագ աճին:

Ժամանակակից գիտությունն ընդգծում է երեխայի զարգացման ու դաստիարակության գործին վաղ միջամտության դերը: Սակայն բոլոր ընտանիքները չէ, որ լիովին կատարում են իրենց դերը՝ համալիր բարենպաստ ներգործությունը: Պատճառները բազմազան են. որոշ ընտանիքներ չեն ցանկանում դաստիարակել, մյուսները չեն կարողանում, երրորդները՝ չեն հասկանում դրա կարևորությունը:

Ընտանեկան դաստիարակության մանկավարժությունը դաստիարակության ամենադժվար բաժինն է: Մանկավարժական մտքի պատմության բոլոր փուլերում ընտանեկան դաստիարակության հարցերն արծածվել են դասական մանկավարժների կողմից: Լուրջ թերություններից մեկն այն է, որ հաճախ ծնողները չեն ճանաչում երեխային, հաշվի չեն առնում նրա պահանջները, ձգտումները: Ծնողների հետ անհատական աշխատանքը պետք է զուգահեռվի կոլեկտիվ աշխատանքի հետ:

Մանկապարտեզը պետք է ստեղծի միջավայր երեխայի ճիշտ զարգացումն գործում, ստանձնի խաղընկերոջ դերը: Երեխայի զարգացման կարևորագույն նախապայմանը զարգացման բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, իմացական փոխկապակվածությունն է: Երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալիզացման գործում: Հայտնվելով մանկապարտեզում երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Նրա էմոցիոնալ դաշտում տեղի է

ունենում փոփոխություն: Նրա հին խաղալիքները փոխարինվում են նորերով: Երեխայի համար մանկապարտեզում սահմանվում է հատուկ օրակարգ: Փոքրիկը զբոսնում է, խաղում, սնվում օրվա հստակ ժամերին: Ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք փորձում է ճշտությամբ կատարել: Նման պարզ խնդիրները երեխաների մոտ զարգացնում են պատասխանատվություն և ինքնուրույնություն:

1.2 Մանկապարտեզի և մանկավարժի դերը երեխայի զարգացման գործում

Ընտանիք-մանկապարտեզ դրական համագործակցությունը երեխաների շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ նրանք աշխատում են երեխայի զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Երեխան ամեն ինչ առաջինը սովորում է և փորձում է հենց ընտանիքում սկսած կերակրվելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամներն են երեխայի համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, կրթում և դաստիարակում: Երեխան իր վրա կրում է ընտանիքի ազդեցությունը և դաստիարակությունը, պետք է լրջորեն հաշվի առնի անձի այդ փաստը: Երեխայի հետ աշխատելիս ամրապնդի կապը ընտանքի հետ՝ նկատի ունենալով դրանց առանձնահատկությունները և տարբերությունները:

Երբ ընտանիքի անդամը դրական մասնացություն է ունենում մանկապարտեզի կյանքին, երեխայի ինքնահարգանքը մեծանում է: Դա երեխային վստահություն է ներշնչում, որ իր ընտանիքը հավանություն է տալիս մանկապարտեզին, որտեղ ինքն անցկացնում է առանց ծնողների: Երեխայի մասին տեղեկության փոխանակումից շահում են թե ծնողը, թե՝ մանկավարժը: Ծնողները կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվությունը: Սա օգնում է ծնողներին լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը և ավելի խորն ըմբռնել երեխայի զարգացման հետ կապված հարցերը, ճիշտ դաստիարակել երեխային տանը: Որոշ դեպքերում առկա է լինում դաստիարակ-ծնող փոխհարաբերության աններդաշնակություն, որը ծնողին հետ է պահում երեխայի ուսուցման գործին ակտիվ մասնակցությունից: Ծնողին պարապունքների և կազմակերպչական աշխատանքներին ներգրավելու համար պետք է ստեղծագործ մոտեցում ցուցաբերել: Ժողովներն ու հանդիպումները անցկացնել ծնողներին հարմար ժամերին, օրերին: Թույլ տալ, որ ընտանիքն ինքն որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը: Պահպանել սերտ կապ, զրուցել ընտանիքի անդամների հետ առնվազն շաբաթը մեկ անգամ: Որոնել տարբերակներ հայրերին, եղբայրներին,

քույրերին մանկապարտեզի կյանքին ներգրավելու համար: Հենվել երեխայի և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն, լինել համբերատար, պահպանել գաղտնիություն:

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար մանկապարտեզն է: Մանկապարտեզը մեծ դեր ունի մանկան սոցիալականացման գործում. Այստեղ երեխան գտնում է նոր միջավայր, նոր աշխարհ՝ նոր կանոններով, նոր առօրյայով: Այն մի վայր է, որը երեխային բերում է ինքնաճանաչման, զարգացնում նրա հետաքրքրություններն ու ազատությունը: Մանկապարտեզն այն վայրն է, ուր զարկ է տրվում երեխայի մտավոր ուժերի զարգացմանն ու կառուցվում նրա սոցիալական կերպարը:

Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ օրվա ժամակարգին, աշխատակարգին, դառնա ավելի ինքնուրույն:

Մանկապարտեզի ընտրության ժամանակ ծնողները պարտադիր պետք է ուշադրություն դարձնեն՝

Ինչպիսի՞ դաստիարակներ և դայակներ են զբաղվում երեխայի խնամքով և դաստիարակությամբ:

Ի՞նչ մեթոդով են իրականացվում երեխայի զարգացման ծրագրերը:

Արդյոք երեխան սիրում է դաստիարակին և դաստիարակի օգնականին: Հաճույքո՞վ է հաճախում, թե՞ պարտադրված:

Արդյո՞ք երեխան ճնշման չի ենթարկվում հասակակիցների և մեծահասակների կողմից:

Որքանո՞վ են մանկապարտեզի պայմանները համապատասխանում սանիտարահիգենիկ պահանջներին:

Որքանո՞վ է մանկապարտեզը երեխայի զարգացման համար նպաստավոր միջավայր ապահովում:

Յուրաքանչյուր երեխա ունի իր զարգացման տեմպը և ուրույն ոճը:

Երեխաների առանձնահատկությունները պետք է հաշվի առնել նրանց հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս:

Երեխաների հետ իրականացվող գործունեությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և խթանի նրանց հետաքրքրությունը, մտածողությունը:

Երեխան սովորում է իրերին ձեռք տալով, դրանք գործածելով, փորձարկելով և շփվելով:

Մանկապարտեզը ստեղծում է այնպիսի միջավայր, որը կնպաստի երեխայի զարգացմանը, իսկ դաստիարակը ստանձնում է խաղընկերոջ դերը:

Օրվա գործունեությունը պլանավորելիս՝ պետք է պլանավորել նաև խթանող , երեխաներին խրախուսող խաղեր:

Դաստիարակը պետք է հետևի երեխաներին, որպեսզի հասկանա՝ ինչն է հասկանալի, ինչը՝ անհասկանալի նրանց: Հիմնվելով դիտարկումների վրա՝ պետք է դաստիարակը առաջարկի հավելյալ առաջադրանքներ, որոնք կնպաստեն մտածելուն: Երեխաների զարգացման կարևորագույն նախապայմանը բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական փոխկապակցվածություն է: Մի ոլորտի զարգացումը նպաստում է մյուս ոլորտների առաջընթացին: Կարևորագույն նախապայմանը խախտված է համարվում, երբ շեշտը դրվում է իմացական ոլորտի վրա՝ նվազեցնելով երեխայի զարգացման մյուս ոլորտների նշանակությունը: Որպեսզի երեխան արագ յուրացնի ինֆորմացիան, անհրաժեշտ է, որ այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ և համապատասխանի նրա զարգացման մակարդակին: Երբ երեխաները զգում են, որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ , ավելի հետևողական են կատարում առաջադրանքը և սովորում են ավելին: Փորձենք դիտարկել մանկապարտեզի առավելությունները՝ երեխայի զարգացման տարբեր ոլորտների վրա ազդեցության տեսանյկյունից.

Սոցիալական ազդեցություն

Մանկական հոգեբաների մեծ մասը միակարծիք են, և պնդում են, որ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալականացման գործում: Հայտնվելով մանկապարտեզում՝ իրեն անծանոթ շրջապատում, երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Եթե նա տանը սովորել է առաջին իսկ պահանջով ստանալ այն, ինչ ուզում է, կամ իր ուզածին հասնել լացով, ապա նոր միջավայրում նա ստիպված է համարվել և ուրիշ կարծիքը հաշվի առնել: Երեխայի

էմոցիոնալ դաշտում տեղի են ունենում փոփոխություններ: Եթե առաջ նա կարեկցում էր հեքիաթների կամ մուլտֆիլմերի հերոսներին, ապա հիմա սկսում է կյանքի նոր փուլ, որտեղ ընկերներն իրական են: Մանկապարտեզում կազմակերպվում են միջոցառումներ, նշվում են տարեդարձներ, կազմակերպվում են արշավներ, այցելում են թանգարաններ, թատրոններ: Երեխան սովորում է արձագանքել իրադարձություններին: Սահմանվում է հստակ օրակարգ. փոքրիկը զբոսնում է, սնվում, խաղում, սովորում, քնում է օրվա հստակ ժամերին: Ճիշտ սահմանած օրակարգը երեխայի հոգեբանական և էմոցիոնալ զարգացման կարևոր դրույթներից մեկն է: Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք փորձում է ճիշտ կատարել, օրինակ՝ սեղանները սպասքադրել, դասավորել խաղալիքները, ուտելուց հետո հավաքել սպասքը , ինքնուրույն հանվել, հագնվել և այլն: Նման պարզ հանձնարարություններ կատարելը զարգացնում է երեխայի պատասխանատվությունն ու ինքնուրույնությունը:

Հոգեբանական ազդեցություն

Մանկապարտեզ հաճախելը դրական է ազդում նաև երեխայի հոգեկան զարգացման վրա:

Ի տարբերություն տանը ծնողի, ընտանիքի անդամի կամ դայակի հսկողությամբ մեծանալուն՝ մանկապարտեզ գնալիս զարգանում են երեխայի՝

Սոցիալական հմտությունները. նա սովորում է արդյունավետ հաղորդակցվել ուրիշ անհատների հետ, (ինչն էլ էականորեն տարբերվում է ընտանիքի անդամների հետ հարաբերություններից):

Թիմում աշխատելու հմտությունները,

Ձեռք է բերում նոր գաղափարներ, մոտեցումներ,

Ընդայնում է աշխարհայացքը:

Մանկապարտեզ հաճախելն ունի նաև մի շարք այլ առավելություններ:

Կա հստակ սահմանված ռեժիմ: Ինչքան ուզում է հետևողական լինի ծնողը, դայակը կամ տատիկը, տնային պայմաններում օրվա ռեժիմին հետևելը շատ ավելի բարդ է, երբեմն նույնիսկ՝ անհնար:

Երեխաների հետ զբաղվում է հատուկ նրանց հետ աշխատելու համար մասնագիտացված անձնակազմ, ինչը ոչ միշտ է հնարավոր ապահովել խնամակալի դեպքում:

1.3 *Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքում*

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Մանկավարժները պետք է ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է, որ ծնողները հավասար ընկալեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությունը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացին: Այդ համագործակցությունից շահում է, թե՞ երեխան, թե՞ ընտանիքը, թե՞ տվյալ հաստատությունը:

Երեխայի հետ աշխատող դաստիարակը պետք է խոսի ծնողի հետ, քննարկի երեխային վերաբերվող բոլոր խնդիրները: Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար, դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի, տարբեր ռազմավարություն կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի ցանկացած արարքի մասին, էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ, ավելի միավորում է նրանց որպես գործընկերներ և արդյունավետ դարձնում աշխատանքը:

Ընտանիքին մանկապարտեզի գործունեությանը մասնակից դարձնելու համար կարելի է կիրառել բազում մեթոդներ, որոնք կօգնեն երեխային ինքնուրույն հասնել հաջողության:

- Շաբաթական կամ ամսական լրատուներ, տեղեկություն են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները,
- Ծնողական ժողովներ,
- Ծնողական համաժողովներ, որի նպատակը դաստիարակության փորձի փոխանակումն է,
- Առավոտյան հանդիպումներ,
- Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին, երբ դաստիարակը ներկայացնում է այն գործողությունը որը կատարվել է երեխայի հետ աշխատելիս,
- Վստահության հեռախոս,
- Կլոր սեղան,
- Զրույցներ՝ անհատական և խմբային,
- Խորհրդատվություններ,
- Երեխաների ընդհանուր զննումներ,

- Սպորտային միջոցառումներ:

Այցերն ընտանիքներ կարևոր տեղեկություն կարող է տալ երեխայի մասին և ամրապնդել փոխհաղորդակցումը: Դաստիարակը նախապես տեղեկացնում է իր այցելության նպատակի մասին: Այստեղ է, որ դաստիարակը նկատում է, թե ինչպիսին է ընտանիքում մանկավարժական մեթոդները:

Տնային այցերը մասնագետին երեխայի և ծնողների կյանքի պայմանների մասին լրացուցիչ հնարավորություն է տալիս: Մանկավարժին թույլ է տալիս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է երեխան: Այցերի ծրագրերը խիստ բազմազան են: Կարևոր է թե այցի նպատակը ծնո՞ղն է, երեխա՞ն, թե ընտանի՞քը:

2.1. Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը սաների դաստիարակման, կրթական աշխատանքի կազմակերպմանի հարցում

Վաղ տարիքի երեխաների սոցիալական զարգացումը կանոնակարգվում է երկու կառույցների միջոցով՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք:

Առավել արդյունավետ աշխատանքի համար ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում պետք է դրվի համագործակցությունը: Մանկավարժները պետք է նախաձեռնող լինեն, ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի զարգացման: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է, որ մանկապարտեզը դառնա բաց համակարգ: Ամենից առաջ անհրաժեշտ է մանկապարտեզի դռները լայն բացել ծնողների և ընտանիքի մյուս անդամների առաջ: Հարկավոր է ընդլայնել ավանդական հաղորդակցման (տոնակատարություններ, ծնողական հավաքներ և այլն) շրջանակները:

Ընտանիքների և նախադպրոցական հաստատության գործունեության համատեղ ծրագիրը հեշտացնում է երեխայի սոցիալական զարգացումը՝ սոցիալականացումը:

Ինչո՞ւ է անհրաժեշտ խթանել մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը:

Երբ ընտանիքի անդամները դրական մասնակցություն են ունենում մանկապարտեզի կյանքին, նույնիսկ եթե այդ մասնակցությունը կարճատև է և ոչ պարբերական, երեխայի ինքնագնահատականը մեծանում է: Երեխային վստահություն է ներշնչում այն հանգամանքը, որ իր ընտանիքը հավանություն է տալիս տան աշխարհից լիովին տարբերվող այն մյուս աշխարհին, որտեղ ինքն անցկացնում է առանց ծնողների:

Մանկապարտեզի կյանքին ընտանիքների մասնակցությունը է՞լ ավելի է ոգեշնչում երեխաներին:

Ի՞նչ են շահում դաստիարակներն ու պարտեզը

Ծնողների և դաստիարակի միջև երեխայի կարիքների և զարգացման մակարդակի մասին տեղեկությունների փոխանակումից շահում է թե՛ ընտանքը, թե՛ մանկապարտեզը: Ծնողները, լինելով տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվություն:

Մանկապարտեզի աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում, երբ ծնողներն ու ընտանիքը դառնում են նրա գործընկերը, ընդունում և շարունակում են մանկապարտեզի նախաձեռնությունները, ինչպես նաև իրենք են նախաձեռնություններով հանդես գալիս:

Ի՞նչ է շահում ընտանիքը

Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ծնողներին ավելի լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը, հասկանալ իրենց երեխայի հաջողությունների և դժվարությունների հիմքերն ու պատճառները, դիտարկել երեխայի վարքը, հասկանալ երեխայի զարգացման հետ կապված հարցերը, որոնք էլ ավելի հեշտ կդարձնեն երեխայի դաստիարակումը տանը:

Ծնողներն ու ընտանիքը կարող են մասնագիտական խորհրդատվություն ստանալ երեխայի զարգացմանն առնչվող այն բոլոր հարցերում, որոնցում իրենք դժվարանում են կամ չեն կողմնորոշվում:

Մանկապարտեզի կյանքում ներգրավելու համար դաստիարակները պետք է նախաձեռնող լինեն և ուղիներ փնտրեն երեխաների միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար: Դրա համար տնօրինությունը և դաստիարակները պետք է մշակեն և զարգացնեն ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ աշխատելու համար անհրաժեշտ հստակ նախագծեր և դրանց իրականացման մեթոդներ: Որպեսզի ընտանիքի մեծամասնությունը ներգրավվի, պետք է անհատական մոտեցուն կիրառվի:

2.2 Ծնողական ժողովներ, առաջարկություններ

Ժողովները մանկապարտեզի և ընտանիքի միջև կարևոր դեր են խաղում: Դրանք հիմք են ծառայում ի ցույց դնելու այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէ արծարծել սովորական աշխատանքային ժամերին: Ժողովներ վարելիս մանկավարժը պետք է ձգտի օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, ցանկալի հյուր զգան, քանի որ պարտեզը մանկավարժի «տարածքն» է: Շփման ժամանակ օգտագործվում է ոչ նեղ մասնագիտական բառապաշար, որ շփումը մտերմիկ լինի: Անհրաժեշտ է ընդգծել երեխայի դրական հատկանիշները, ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են օգնել իրենց երեխային: Ծնողների գնալուց հետո մանկավարժը պետք է գրի առնի ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկությունները ու քննարկված հարցերը:

Ծնողական ժողովները լինում են ընդհանուր և խմբային:

Ընդհանուր ժողովները կազմակերպվում են տարին երկու-երեք անգամ: Դրանք իրականացվում են հիմնականում մանկավարժական խորհրդի և տնօրենի գլխավորությամբ: Քննարկվում են խնդիրներ կապված նոր ուսումնական տարվա և աշխատանքների ամփոփման հետ կապված: Այս դեպքում մանկավարժը պետք է զրուցի ոչ միայն երեխաների, այլև առօրյա հոգսերի, մանկապարտեզի մշակութային կյանքի և այլ իրադարձությունների շուրջ: Պետք է օգտագործել հաղորդակցման նորաձև և մտերմիկ ոճեր: Ընդհանուր ժողովների կարելի է հրավիրել բժշկի, հոեբանի, արվեստագետի և այլ մասնագետների:

Խմբային ժողովները անցկացվում են 2-3 ամիսը մեկը անգամ: Դաստիարակը զեկուցում է խմբի ընդհանուր կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին: Խոսքով կարող են հանդես գալ ծնողներ և այլ մասնագետներ:

Գոյություն ունեն նաև ծնողական համաժողովներ, որոնց հիմնական նպատակը պետք է լինի ընտանեկան դաստիարակման փորձի փոխանակումը: Ժողովի ժամանակ ելույթ են ունենում տարբեր մասնագետներ, կազմակերպվում են ցուցահանդեսներ՝ երեխաների կամ մանկավաժների ձեռքի աշխատանքներից: Համաժողովի վերջում մասնակիցները հրավիրվում են «կլոր սեղանի» շուրջ: Որոշվում են ապագա մրցույթների, ծրագրերի օրերն ու ժամերը: Դաստիարակը պետք է իմանա մասնակիցների անունները, չի կարելի ձգձգել միջոցառումը: Որոշ ծնողների խոսքից հետո դաստիարակը պետք է ընդհանրացնի իր ասելիքը՝ համեմելով խմբի երեխաների կյանքի կոնկրետ օրինակներով, զվարճալի իրադարձություններով:

Առաջարկությունների արկղիկը, որը հիմնականում ամրացվում է մանկապարտեզի միջանցքների պատերին, հիմք է հանդիսանում դրան, որ ծնողները արտահայտեն իրենց մտահոգությունները երեխաների հետ կապված այս կամ այն հարցի շուրջ: Ծնողը պարտավոր չէ իր թերթի վրա նշել իր կամ երեխայի անունը: Արկղը բացվում է ժողովների ժամանակ և քննարկվում դրա մեջ հավաքված հարցերը լինում են նաև բարեմաղթանքներ, որոնք մանկավարժը ընթերցում է ժողովի ընթացքում:

Գործում է նաև «Վստահությանն հեռախոս», «Մանկավարժի հյուրասրահ», «Գաղափարների տոնավաճառ»: Սրանք ժամանակակից ձևեր են, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում ծնողների հետ: Կարելի է ացկացնել մրցույթ «Ամենահամերաշխ ընտանիք» վերնագրով, որտեղ ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու երեխաները: Այս մրցույթներն ավելի են մտերմացնում թե ընտանիքի անդամներին, և թե ընտանիք-մանկապարտեզ հարաբերությունները: Ամեն նոր հավաքույթի ժամանակ կազմակերպվում են նոր մրցույթներ,որտեղ ներգրավվում են նաև տարբեր ընտանի կենդանիներ: Այստեղ մանկավարժների կողմից ուսուցանվում է սեր դեպի ընտանի կենդանիները: Վերջում նույնիսկ տրվում են պատվոգրեր, որոնք պատրաստվում են մանկավարժների ու սաների կղմից: Երեխաները կոփվում են հոգեպես և ֆիզիկապես, ավելի մտերմանում ընկերների հետ:

Այս բոլոր միջոցառումները կատարելագործում են մանկապարտեզները և ճիշտ օրինակ դարձնում նոր ստեղծվող պարտեզների համար:Դրանք պետք է շարունակական լինեն, որպեսզի արդյունավետ ազդեցություն գործեն երեխայի զարգացման վրա:

2.3.Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

Ծնողների հետ աշխատանք տանելու ժամանակ անհրաժեշտ է ստեղծագործական և ճկուն մոտեցում: Օգտագործել բազմատեսակ ձևեր, որոնցից է ժողովների անցկացումը ծնողներին հարմար ժամերին: Թույլ տալ ծնողներին, որ իրենք որոշեն ընդհանուր գործին իրենց մասնակցության լավագույն ձևը: Հետևել, որ մյուս մանակավարժները՝

երաշժտության, լոգոեպեդը, գոնե շաբաթը մեկ անգամ հանդիպեն ծնողներին: Փորձեր են կատարում ներգրավել ոչ միայն ծնողներին, այլև ընտանիքի մյուս անդամներին: Հենվել ընտանիքի ուժեղ կողմերի վրա՝ քիչ-քիչ ստվերում թողնելով թույլ կողմերը: Համերաշխությունը կարևոր գործոն է աշխատանքի ժամանակ, քանի որ մեծ ջանքեր են պահանջում: Ամենակարևոր պայմանը գաղտնիության պահպանումն է յուրաքանչյուր ընտանիքի հետ աշխատելիս:

2.4 Ընտանիք – մանկապարտեզ համագործակցության մոդել

Մոդելի նպատակը ընտանիք-մանկավաժ համագործակցության խթանումն է: Այն նպաստում է դաստիարակչական միասնական տարածքի ստեղծմանը:



2.5 Փորձարարական

Հետազոտությունը նպատակ ուներ պարզել երեխայի դիրքը ընտանիքում, ով է երեխան ընտանիքի անդամների համար, ծնողները որքան ժամանակ են հատկացնում իրենց երեխային, գտնել ծնողների հետ շփվելու ուղիներ, ինչպիսի հարաբերություններ

ունեն ծնողները մանկավարժների հետ, որպեսզի. ստացված արդյունքների հիման վրա մանկավարժների համար մշակել առաջարկություններ և խորհուրդներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ: Նպատակներին, խնդիրներին, վարկածին համապատասխան ընտրվել են հետևյալ մեթոդները՝ «Երկու տուն» մեթոդը և հարցաշար: Հետազոտության օբյեկտները եղել են մանկապարտեզի ավագ խմբի 30 երեխաները : Հետազոտությունն անցկացվել է«Երկու տուն» մեթոդով: Բոլորին տրվել են նույն3 հարցերը.

Ո՞ր տանը կցանկանայիք ապրել մեծ գեղեցիկ տանը (ցույցադրվել է տան նկարը), թե՞ մեկ այլ տանը (փոքր, տգեղ): Ո՞ւմ հետ կցանկանայիք ապրել այս տանը: 30 երեխաներից 19-ը կցանկանար ապրել գեղեցիկ տանը, ընտանիքի բոլոր իրական անդամների հետ, 11 երեխա նույնպես կցանկանար ապրել գեղեցիկ տանը, բայց առանց հոր, կրտսեր եղբոր կամ քրոջ: Հարցման նյութերը մշակելուց հետո եկա այն եզրահանգման, որ երեխաները խնդիր ունեն հոր հետ հարաբերություններում,որը ազդում է երեխայի վարքի և սոցիալականացման գործընթացի վրա:

Այս դեպքում ծնողի և մանկավարժի համագործակցությունը ավելի սերտ պետք է լինի:

Ընտանիքում երեխաների ու ծնողների փոխհարաբերությունները որոշելու համար կիրառվել է՝ երեխան ծնողի աչքերով թեստը:

Հարցաթերթը լրացնում են ծնողները: Հարցմանը մասնակցել է 30 ծնող:

Հարցումը օգնում է ուսումնասիրել երեխայի ընտանեկան դրությունը, ընտանիքում տիրող մթնոլորտը, նրա բարոյական նորմերը:

Հարցաթերթ

Հասկացությունները դասավորել ըստ առաջնահերթության.

1.Ինձ համար ամենակարևորն այն է, որ երեխաս ունենա լավ...

- Սնունդ
- Առողջություն
- ընկերներ
- աշխատանք
- հարազատների հետ լավ հարաբերություններ
- սեր
- կրտություն
- փող
- տուն

2.Նկարագրեք՝ ինչ եք զգում ձեր երեխայի անունը տալիս:

Ուսումնասիրելով հարցվողների պատասխանները պարզ դարձավ,որ հարցվողների 65%-ի համար կարևոր է առողջությունը, 15% -ի համար կրթությունը, 10%-ի փողը, 10%- ի համար սերը:

Այս հետազոտությունները հնարավորություն են տալիս մանկավարժին պատկերացում կազմել ընտանիքի անդամների և երեխայի միջև եղած հարաբերությունների մասին: Յուրաքանչյուր երեխայի և ծնողի հետ ստեղծել հատուկ համագործակցություն ի շահ երեխայի ճիշտ սոցիալականացման և զարգացման:

Ստորև բերված գծապատկերում /նկ 1/ հստակ երևում է, որ ինչքան բարձր մակարդակով և սերտ է մանկավարժի փոխադարձ համագործակցությունը ծնողի հետ՝ երեխայների զարգացման և դաստիարակության հարցերում,այնքան արդյունավետ է զարգացումը, սոցիալականացումը, կրթությունը ու դաստիարակությունը:

Նկ 1



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտության արդյունքից կարելի է եզրակացնել, որ երբ ծնողը ակտիվ և փոխադարձ համագործակցում է մանկավարժի հետ, ապա այդ համագործակցությունից երեխայի մոտ բարձրանում է առաջադիմության, զարգացվածության մակարդակը, բարելավվում է հաճախելիության ցուցանիշը: Երեխաների մոտ զարգանում են սոցիալական կարողունակություններ և նրանց վարքը դառնում է դրական ինչպես մանկապարտեզում, այնպես էլ տանը: Ուստի և՝ ծնողը, և՝ մանկավարժը անընդհատ, փոխադարձ համաձայնությամբ պետք է թարմացնեն համագործակցության մեթոդները և կիրառեն նոր հմտություններ՝ երեխաների ճիշտ դաստիրակելու հարցում:

Մանկապարտեզը լրացնում է, օգնում ծնողի սկսած աշխատանքը ճիշտ նպատակին հասցնելուն: Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, և հարաբերությունը պետք է լինի բարեկամական-գործընկերային:

Ուսումնասիրությունների հիման վրա առանձնացվել են մի քանի կետ՝

- Ընտանիքը պետք է դառնա մանկապարտեզի գործընկերը
- Ընտանիքը որպես փորձագետ պետք է օգնի մանկապարտեզին զարգացնել և կատարելագործել ծրագիրը
- Ընտանիքը պետք է ընդունի մանկապարտեզի մանկավարժական մոտեցումները և սկզբունքները
- Մանկապարտեզը ծնողին պետք է դիտարկի որպես գործընկեր, պատվիրատու, լսի ծնողի անհանգստությունը, կարևորի նրա դիտարկումները, տարբեր մասնագիտություններ ունեցող ծնողներին դիտարկի որպես մասնագետներ
- Ծնողների կարողությունը դիտարկի որպես ռեսուրս և օգտագործի ի նպաստ մանկապարտեզի
- Ծնողներին պետք է ներգրավվել մանկապարտեզի ամենօրյա կյանքին՝ ներառելով նրանց տարբեր աշխատանքներում:

Այն պարտեզներում, որտեղ ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը կարևորվում է, երեխաները ավելի ազատ են, ինքնավստահ, հանգիստ և երջանիկ: Բոլոր տեսակի գործընկերության հարաբերությունները ընթանում են կողմերի հավասարության, փոխադարձ գոհունակության և հարգանքի վրա: Դա արտացոլվում է երեխայի դեմքին և արարքների մեջ:

ԱՄՓՈՓՈՒՄ << Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>:Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ նաև աշխարհի ապագա պատմությունը: Ա. Ս. Մակարենկո

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Հ. Հ. «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները», 1-ին և 2-րդ մաս, Երևան 2007թ.
2. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս «Մանկավարժություն», Երևան 2005թ.
3. Մարության Ա. Ս., Դալլաքյան Ա. Մ. «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, Երևան 2008թ
4. «Նախաշավիղ» ամսագիր
5. Սուխոմլինսկի Վ. Ա. «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Երևան 1977թ.
6. «Դպիր» ամսագիր
7. Спок Б. «Ребенок и уход за ним»
8. Макаренко А. С. «О воспитании», М. 1988г.
9. Подласый И. П. «Педагогика», книга 2, М. 2003г.